


# «ՇԻՐԱԿԱՅՈՒ ԾԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ





“Shirakatsy Lyceum”

International Scientific-Educational Complex

«ՇԻՐԱԿԱՏՈՒ ԺԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ



---

 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
 

---

1. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ	2
2. ԿԻՐԱՌՈՒՄԸ	3
3. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
4. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԿՊԱՏԱԿՆԵՐԸ	5
5. ԴՊՐՈՑԻ ՈՋ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՋԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	6
6. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽԱՆՏՈՒՄ ՍՈՎՈՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ	7
7. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	8
8. ՆԵՐՔԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ	11
9. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԴԵՐԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	12
10. ԿԱՊԵՐ ԱՅԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ	15
11. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	16
12. ՀԱՎԵԼՎԱԾ՝ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 16	
13. ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ	

## 1. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ակադեմիական ազնվությունը կրթության մեջ հիմնարար սկզբունք է և պատասխանատու վարքի գիտակցված ընտրություն, որի միջոցով ուրիշները կարող են վստահել մեզ՝ որպես անհատներ: Այն բարոյական որոշումների և վարքագծի կերտման հիմքն է օրինական, հավաստի և արդար գիտական աշխատանքներ ստեղծելու գործընթացում:

Շիրակացու անվան հեմարանում ակադեմիական ազնվությունը ընկալվում է ոչ միայն որպես ակադեմիական անազնվության կանխարգելում, այլ նաև որպես հետազոտական աշխատանքի հմտությունների զարգացում, էթիկական դատողություն և հարգանք՝ մտավոր սեփականության նկատմամբ, ողջ կյանքի ընթացքում: Այս արժեքները սերմանելով՝ մենք օգնում ենք մեր ուսանողներին հասնելու հաջողության՝ որպես ապագա ուսանողներ, մասնագետներ և աշխարհի ֆաղափացիներ:

Մեր փիլիսոփայությունը հիմնված է Միջազգային բակալավրիատի (ՄԲ) առաքելության վրա, որը միտված է հետաքրքրասեր, կրթված և հոգատար երիտասարդների դաստիարակությանը, որոնք միջմշակութային փոխըմբռնման և հարգանքի միջոցով իրենց դերը կունենան ավելի լավ և խաղաղ աշխարհի ստեղծման գործում: Այն նաև համապատասխանում է Շիրակացու հեմարանի առաքելությանը՝ «կերտել ազգային հենքի վրա ձևավորված համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորական և ֆաղափացի»: Ակադեմիական ազնվությունը երկու առաքելությունների իրականացման կարևորագույն պայմանն է՝ երաշխավորելով որ ուսուցման գործընթացը լինի իրական, արդար և արտացոլի յուրաքանչյուր ուսանողի իսկական նվաճումները:

Բացի այդ, ակադեմիական ազնվության սկզբունքներն ուղղակիորեն առնչվում են ՄԲ սովորողի արակների բնութագրերի հետ: Շիրակացու հեմարանի սովորողներից ակնկալվում է սկզբունքայնություն, ազնվություն և արդարություն, ազատ մտածելու կարողություն, հարգանք տարբեր տեսակետների, մտավոր աշխատանքի և ուրիշների նկատմամբ, ինչպես նաև հոգատարություն և բնադատական վերաբերմունք սեփական կրթության և պարտականությունների նկատմամբ:

Մենք հավատում ենք, որ ակադեմիական ազնվության մշակույթի ձևավորումը բոլոր ծրագրերում՝ սկսած Կրտսեր դպրոցից (PYP) մինչև Միջին դպրոց(MYP), այնուհետև Ավագ դպրոցի դիպլոմային (DP) և հեղինակային ծրագրեր, ոչ միայն ստեղծում է առողջ կրթական միջավայր, այլև ուսանողներին տալիս է այն բարոյական սկզբունքներն ու կենսական հմտությունները, որոնք անհրաժեշտ են ավելի բարդ և փոփոխվողակցված աշխարհում կողմնորոշվելու համար:

Այս ֆաղափականությունը ձևավորում է տարիքին համապատասխան պահանջներ, որպեսզի ՄԲ-ի բոլոր սովորողները կարողանան հասկանալ.

- հավաստի և իրական խմբային աշխատանքներ ստեղծելու սեփական պատասխանատվությունը,
- ճիշտ հղումներ կատարելու եղանակները՝ հարգելով ուրիշների աշխատանքը և գաղափարները,
- տեղեկատվության, տեխնոլոգիայի և սցիալական մեդիայի պատասխանատու օգտագործումը,
- էթիկական և ազնիվ վարքականոնները, որոնք պետք է պահպանվեն բնությունների/գնահատման ընթացքում:

## 2. ԿԻՐԱՌՈՒՄԸ

Սույն ակադեմիական ազնվության ֆաղափականությունը կիրառվում է Շիրակացու հեմարանի ողջ համայնքի նկատմամբ և ապահովում է էթիկական ուսուցման միասնական շրջանակ բոլոր ծրագրերում՝ Կրտսեր դպրոցի ծրագիր (PYP), Միջին դպրոցի ծրագիր (MYP), Դիպլոմային ծրագիր (DP) և Ավագ դպրոցի հեղինակային ծրագիր:

- 2.1. Սույն ֆազաֆականությունը կիրառելի է բոլոր տեսակի ուսումնական գործընթացների համար՝ ներառյալ դասարանային պարապմունքները, միջանկյալ և ամփոփիչ գնահատումները, յուրացման առաջադրանքները, նախագծերը, հետազոտական աշխատանքները, ցուցահանդեսները և դպրոցական այլ առաջադրանքները:
- 2.2. Այն կարգավորում է դպրոցական ներքին ֆիննությունների և գնահատման ընթացքում ընդունելի վարձագիծը՝ ապահովելով ընթացակարգերի թափանցիկություն, արդարություն և համաչափություն ուսուցման բոլոր մակարդակներում:
- 2.3. Դիպլոմային ծրագրում այս ֆազաֆականությունը վերաբերում է բոլոր դասընթացներին և ՄԲ ֆիննություններին, որտեղ պետք է խստորեն պահպանվեն ՄԲ կանոնները և արտաֆին հաշվետվությունների ընթացակարգերը:
- 2.4. Միջին դպրոցի ծրագրում այս ֆազաֆականությունը վերաբերում է ուսումնական բոլոր գործընթացներին և ՄԲ արտաֆին գնահատման ներկայացվող անհատական նախագծերին:
- 2.5. Ոչ պատճառ վարձագծին, ինչպես ներքին, այնպես էլ արտաֆին համատեքստում լուրջ են վերաբերվում, սակայն արձագանքները միշտ համահունչ են ուսանողի տարիքին և զարգացման մակարդակին:
- 2.6. Դպրոցը պահպանում է բողոքների ներքին ընթացակարգերը ակադեմիական խախտումների կամ ոչ պատճառ կառավարման դեպքերում:
- 2.7. Ներքին ընթացակարգերը ՄԲ կանոնակարգերի հետ համապատասխանեցնելով՝ Շիրակացու նենարանը ուսանողներին աստիճանաբար նախապատրաստում է ակադեմիական պահանջներին, ինչպես նաև իրենց հետագա ուսմանը և կարիերային:

### 3. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ակադեմիական ազնվության ընդհանուր ընկալումը ապահովելու նպատակով, հետևյալ հիմնական տերմինները սահմանված են ՄԲ Ակադեմիական ազնվության ֆազաֆականության համաձայն (2025) և հարմարեցված Շիրակացու նենարանի համատեքստին:

- 3.1. Ակադեմիական ազնվություն
 

Ակադեմիական ազնվությունը կրթության մեջ հիմնարար սկզբունք է և պատասխանատվությամբ գործելու գիտակցված ընտրություն, որն ապահովում է ուրիշների վստահությունը մեր հանդեպ: Դա էթիկական որոշումների կայացման և վարձագծի հիմքն է օրինական, իրական և ազնիվ գիտական աշխատություններ ստեղծելու գործում:
- 3.2. Սովորողների կողմից ակադեմիական ազնվության խախտում
 

Դիտավորյալ կամ ոչ դիտավորյալ ցուցաբերված վարձագիծ է, որը սովորողին կամ որևէ այլ անձի անարդարացիորեն առավելություն է տալիս գնահատման մեկ կամ մի քանի բաղադրիչներում կամ վնասում է որևէ այլ սովորողի: Ակադեմիական ազնվության խախտումը կարող է դրսևորվել թղթային և թվային տարբերակով գնահատումից առաջ, ընթացքում կամ դրանից հետո: Օրինակներից են՝

  - 3.2.1. գրագողությունը, որը այլոց գաղափարները, խոսքերը կամ աշխատանքը որպես սեփական ներկայացնելն է.
  - 3.2.2. համադասարանցիներից գրագողությունը, որը այլ ուսանողի աշխատանքը պատճենելը կամ սեփական աշխատանքը նրան տրամադրելն է/հասանելի դարձնելը/.
  - 3.2.3. գաղտնի համաձայնություն, որը համագործակցային աշխատանքը որպես անհատական աշխատանք ներկայացնելն է կամ նման աշխատանք ստեղծելու համար այլոց հետ համագործակցելը.
  - 3.2.4. աշխատանքի կրկնօրինակումը, որը նույն աշխատանքը մասամբ կամ ամբողջությամբ ներկայացնելն է տարբեր գնահատումների համար.
  - 3.2.5. տվյալների կեղծումը, որը փորձի, նախագծի կամ հետազոտության համար տվյալներ հորինելն է կամ փոփոխելը.
  - 3.2.6. ոչ սեփական կամ պատվիրված աշխատանքները, որը երբորդ անձի կողմից խմբագրված, ստեղծված կամ ձեռք բերված աշխատանքները որպես սեփական ներկայացնելն է՝ առանց աղբյուրը նշելու՝

ներառյալ էսսեններ ստեղծող ծառայությունները կամ ստեղծագործական արհեստական բանականության գործիքները.

- 3.2.7.** Բնության ժամանակ անագնիվ վարձագիծը, որը չթույլատրված նյութեր պահելն է, կարգը խախտելը, այլ անձի փոխարեն բնությանը ներկայանալը կամ բնություն հանձնելուց հետո 24 ժամվա ընթացքում բնության բովանդակության տարածելը.
- 3.2.8.** Բացահայտումը, որը բնության նյութերի դուրս բերելն է, տարածելը, ինչպես նաև բնական գործընթացների մանրամասների հրապարակելը.
- 3.2.9.** արգելված նյութերի/սարքերի օգտագործումը, որը գնահատման կամ բնության ընթացքում չթույլատրված սարքերի, գրառումների կամ ռեսուրսների օգտագործելն է կամ փոխանցելը:

### 3.3. Դպրոցի ոչ պատճառ կառավարում

Դպրոցի կամ նրան առնչվող անձանց ցանկացած գործողությունն է, որը խախտում է ՄԲ կանոնակարգերը և կարող է վտանգել գնահատման ամբողջականությունը: Ինչպիսիք են՝

- 3.3.1.** ՄԲ բնական նյութերի ոչ պատճառ կամ ոչ ապահով պահպանումը,  
**3.3.2.** դասընթացի ընթացքում ավելորդ կամ չթույլատրված օգնության տրամադրումը,  
**3.3.3.** առանց ՄԲ թույլտվության լրացուցիչ ժամանակ տրամադրումը,  
**3.3.4.** բնությունների ընթացքում ոչ պատճառ կամ անբավարար հսկողությունը,  
**3.3.5.** բնության կամ գնահատման բովանդակության չթույլատրված հասանելիությունը կամ բացահայտումը:

### 3.4. Արհեստական բանականության գործիքների պատասխանատու օգտագործում

Սովորողներն ու աշխատակիցները կարող են օգտագործել արհեստական բանականության գործիքներ (օրինակ՝ լեզվական մոդելներ, պատկերներ ստեղծողներ կամ ավտոմատ ամփոփիչներ) միայն հետևյալ դեպքերում՝

- 3.4.1.** օգտագործումը թույլատրվում է առարկայի ուսուցչի կամ ՄԲ ուղեցույցների կողմից,  
**3.4.2.** արհեստական բանականության օգտագործումը աշխատանքում հստակ նշված է,  
**3.4.3.** արհեստական բանականություն օգտագործվում է որպես աջակցություն (օրինակ՝ գաղափարների ստեղծման, լեզվի ստուգման համար), այլ ոչ թե որպես ուսանողի իրական աշխատանքի փոխարինող:  
**3.4.4.** Արհեստական բանականության չհիշատակված/չփաստված կամ ոչ պատճառ օգտագործումը համարվում է ակադեմիական ազնվության խախտում:

### 3.5. Հավանականությունների հավասարակշռություն

Այս կզբունքը կիրառվում է այն ժամանակ, երբ պետք է որոշել՝ արդյոք տեղի է ունեցել ակադեմիական ազնվության խախտում: Որոշումը հիմնվում է այն բանի վրա, թե որքան հավանական է, որ դեպքը տեղի է ունեցել, եթե անգամ բացակայում են հիմնավոր կասկածից վեր ապացույցներ:

### 3.6. Շահերի բախում

Սա այն իրավիճակն է, երբ անձի ստանձնած որևէ դեր կամ հարաբերություն ազդում է նրա կարծիքի վրա իր ստանձնած մեկ այլ դերում: Սա ներառում է իրական (օրինակ՝ ի շահ ընտանիքի անդամի) և ընթացիկ (ֆավորիստիզմ) շահերի բախումներ:

## 4. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Շիրակացու հեմարանի ակադեմիական ազնվության ֆողափականության նպատակն է ապահովել, որ դպրոցական համայնքի բոլոր անդամները՝ սովորողները, ուսուցիչները, ծնողները և աշխատակիցները, հասկանան և պահպանեն արդարության, ազնվության և մտավոր սեփականության նկատմամբ հարգանքի սկզբունքները: Ակադեմիական ազնվության պահպանումը կարևորվում է ոչ միայն կանոնները պահելու տեսանկյունից, այլև դիտարկվում է որպես ուսումնառության և անձնական աճի հիմք:

ՄԲ փիլիսոփայության համաձայն, այս ֆազաֆականության նպատակներն են՝

- 4.1. կերտել սկզբունքային սովորողների, որոնք ազնվությամբ և պատասխանատվությամբ կստեղծեն իրական, ինքնատիպ անհատական և խմբային աշխատանքներ,
- 4.2. խթանել միջազգային մտածողությունը՝ սովորողների մեջ սերմանելով հարգանք տարբեր տեսակետների, մշակույթների, ինչպես նաև այլոց մտավոր սեփականության հանդեպ,
- 4.3. նպաստել ՈՒՄ հմտությունների զարգացմանը, որոնք կանխում են ակադեմիական անազնվությունը և նպաստում ցկյան սովորելուն: Դրանք են՝
  - հետազոտական հմտություններ, որոնք են՝ աղբյուրների արդյունավետ օգտագործումը, հիշու մեջբերումներ և հղումներ կատարելը, տեխնոլոգիաների և արհեստական բանականության պատասխանատու կերպով օգտագործումը,
  - հաղորդակցական հմտություններ, որոնք են՝ գաղափարների արտահայտումը իրական իրավիճակներում և համագործակցության կարևորության գիտակցումը,
  - ինքնակառավարման հմտություններ, որոնք են՝ ժամկետների պահպանումը, աշխատանքային ծանրաբեռնվածության համաչափ բաշխումը և խուսափումը այն գործողություններից, որոնք կարող են դրդել ակադեմիական անազնվության,
  - մտածական հմտություններ, որոնք են՝ տեղեկատվության ֆինադատաբար վերլուծումը, էթիկական որոշումների կայացումը և սեփական ուսումնառության անդադարձը:
- 4.4. ապահովել արդարություն և հավասար հնարավորություններ՝ պահանջելով, որ բոլոր գնահատումները արտացոլեն սովորողի իրական նվաճումները՝ առանց որևէ անարդար առավելության,
- 4.5. կանխել ակադեմիական անազնվությունը հստակ ֆազաֆականությունների, նախաձեռնողական կրթության և խախտումները դիտարկելու բախանցիկ ընթացակարգերի միջոցով,
- 4.6. աջակցել էթիկական որոշումների կայացմանը, որպեսզի սովորողները կարողանան կիրառել արդարության և ազնվության սկզբունքները դպրոցից դուրս, բարձրագույն կրթություն ստանալիս, հետագա աշխատանքային գործունեության ընթացքում և ֆազաֆականական կյանքում,
- 4.7. ամրապնդել համայնքի դերը՝ ներգրավելով ուսուցիչներին, ծրագրի համակարգողներին, ծնողներին և խնամակալներին՝ որպես գործընկերներ՝ սովորողների ազնվությունը խթանելու և աջակցելու նպատակով:

## 5. ԴՊՐՈՑԻ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ակադեմիական ազնվությունը կարող է խախտվել ոչ միայն սովորողների, այլև դպրոցների կամ անձնակազմի կողմից ոչ պատշաճ կառավարման արդյունքում: Վերջինս վերաբերում է դպրոցի կամ նրան առնչվող անձանց ցանկացած այն գործողություններին, որոնք խախտում են դպրոցի ընթացակարգերը կամ ՄԲ կանոնակարգերը և հնարավոր սպառնալիք են դառնում դասավանդման, ուսուցման կամ գնահատման գործընթացներին: Նման միջադեպերը կարող են տեղի ունենալ գնահատման ցանկացած բաղադրիչի ավարտից առաջ, ընթացքում կամ հետո:

### 5.1. Ոչ պատշաճ կառավարման օրինակներ

#### 5.1.1. Ոչ պատշաճ կառավարման ներդպրոցական (աշխատանք և գնահատում դպրոցում) օրինակներ՝

- 5.1.1.1. ներդպրոցական գնահատումների, նախագծերի, Կրտսեր և Միջին դպրոցների (PYP/MYP) ցուցանանդեսների ընթացքում սովորողներին ավելորդ կամ չորսլատրված օգնություն տրամադրելը,
- 5.1.1.2. բոլոր սովորողների համար նախապես համաձայնեցված ժամկետների, կանոնների և հարմարեցումների չպահպանելը,
- 5.1.1.3. ռեսուրսների անհավասար հասանելիություն ապահովելը (Օրինակ՝ որոշ սովորողներին նախնական օգնություն տրամադրելը, որը մյուսներին հասանելի չէ),

**5.1.1.4.** սկզբնաղբյուրներին հղում չկատարելը կամ ցածր դասարաններում գրագոյություն նկատմամբ համակարգված հանդուրժողականություն ցուցաբերելը,

**5.1.1.5.** ներդպրոցական ֆննդություններին կամ դասարանական թեստային աշխատանքներին ոչ պատշաճ հսկողություն իրականացնելը:

**5.1.2.** Ոչ պատշաճ կառավարման արտաֆին (ՄԲ դասընթացներ և ֆննդություններ) օրինակներ՝

**5.1.2.1.** ԴՕ ֆննդական աշխատանքներին կամ թվային գնահատման բովանդակության՝ ՄԲ պահանջներին համապատասխան չպահպանելը,

**5.1.2.2.** առանց ՄԲ թույլտվության լրացուցիչ ժամանակ կամ կարգավորումներին հասանալիություն տրամադրելը,

**5.1.2.3.** սովորողներին ավելորդ կամ չթույլատրված օգնության տրամադրելը ակադեմիական աշխատանքներ կատարելիս,

**5.1.2.4.** ոչ բավարար ֆննդությանը կամ առանց վերապատրաստման հսկիչներ նշանակելը,

**5.1.2.5.** ՄԲ ֆննդության ընթացքում ֆննդական առարկայի ուսուցչին ֆննհասեղանակ մտնելը և սովորողներին օգնել թույլատրելը,

**5.1.2.6.** ֆննդությունների ընթացքում, ինչպես նաև սանհանգույց ուղեկցելիս, սաներին հավուր պատշաճի չհսկելը,

**5.1.2.7.** նախանշված ժամանակից առաջ ՄԲ ֆննդության բովանդակությունը չթույլատրված հասանալիություն տրամադրելը կամ այն տարածելը դպրոցում կամ դրանից դուրս:

**5.2.** Հաշվետվություն և հաշվետվողականություն

**5.2.1.** Ներքին հաշվետվություն

**5.2.1.1.** Ներդպրոցական գնահատման ժամանակ ոչ պատշաճ կառավարման կասկածելի դեպքերը պետք է ներկայացվեն ծրագրի համակարգողին, որը կուսումնասիրի դեպքը՝ խորհրդակցելով տնօրենի հետ:

**5.2.1.2.** Միջադեպերի բոլոր մանրամասները գրանցվում են՝ ներառյալ մասնակից անձանց տվյալները, հավաքված ապացույցները և ձեռնարկած գործողությունները:

**5.2.1.3.** անձնակազմի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական միջոցներ՝ ներառյալ զգուշացումներ, վերապատրաստումներ, գնահատման գործընթացին մասնակցությունից զրկելը կամ կրկնվող/ ծանր դեպքերում դպրոցի տնօրենության խորհրդին ներկայացնելը:

**5.2.2.** Արտաֆին հաշվետվություն (կապված ՄԲ-ի հետ)

**5.2.2.1.** ՄԲ գնահատմանը կամ ֆննդություններին վերաբերող ոչ պատշաճ կառավարման ցանկացած կասկածելի դեպք ծրագրի համակարգողը կամ դպրոցի տնօրենը պետք է ներկայացնի ՄԲ-ին՝ հետևելով պատշաճ կանոնակարգի ընթացակարգերին:

**5.2.2.2.** Միջադեպի բոլոր մանրամասները պետք է գրանցվեն՝ ներառյալ մասնակից անձանց տվյալները, հավաքված ապացույցները և ձեռնարկած գործողությունները:

**5.2.2.3.** Ներգրավված աշխատակիցները կարող են զրկվել դասավանդելու կամ ՄԲ գնահատումները հսկելու իրավունքից, և ՄԲ-ն կարող է կիրակել լրացուցիչ տույժեր:

**5.2.3.** Արդարություն սովորողների նկատմամբ

Ոչ պատշաճ կառավարման դեպքում սովորողները չպետք է հայտնվեն անբարենպաստ պայմաններում կամ անարդարացի կերպով պատժվեն:

**5.2.3.1.** Ներդպրոցական խնդիրներ. դպրոցը տուժած սովորողներին տալիս է արդար հնարավորություններ՝ գիտելիք ցույց տալու համար (օրինակ՝ ներդպրոցական թեստը վերահանձնել պատշաճ պայմաններում):

**5.2.3.2. Արտաքին խնդիրներ.** ՄԲ-ն կարող է պահանջել, որ տուժած սովորողները վերահանձնեն թեստը, եթե տեղի է ունեցել ակադեմիական ազնվության խախտում:

**5.3. Դեպքի ուսումնասիրության սկզբունքները**

**5.3.1.** Դեպքի ուսումնասիրությունները պետք է իրականացվեն արդար և թափանցիկ պայանաններում՝ հիմնված հավանականությունների հավասարակշռության սկզբունքի վրա:

**5.3.2.** Դեպքի ուսումնասիրությանը ներգրավված աշխատակիցները և սովորողները իրավունք ունեն ներկայացնելու գրավոր հայտարարություն և լինելու լսելի:

**5.3.3.** Գաղտնիությունը պահպանվում է ողջ ընթացքում՝ մինչև ժամանակ գրանցելով բոլոր ապացույցները:

Հղում՝ Միջազգային բակալավրիատի կազմակերպություն: Ակադեմիական ազնվության բաղաձայնություն. 2019 (Թարմացվել է 2025 թվականի փետրվարին):

## **6. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽԱՆՏՈՒՄ ՍՈՎՈՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ**

Ակադեմիական ազնվության խախտումը սովորողի կողմից դրսևորած դիտավորյալ և ոչ դիտավորյալ վարագիծ է, որի արդյունքում նա կամ այլ սովորողներ կունենան առավելություն ակադեմիական համայնքի մյուս ներկայացուցիչների հանդեպ: Մոտեցումը գործադրվում է Շիրակացու հեմարանի բոլոր ծրագրերում (ԿԴ, ՄԴ, ԴԾ և ավագ դպրոցի հեղինակային ծրագիր (ՀԾ)) և բոլոր գնահատումների ժամանակ, ինչպես ներդպրոցական, այնպես էլ արտաքին (ՄԲ-ի կողմից կարգավորվող):

Ակադեմիական ազնվության խախտումը կարող է տեղի ունենալ ուսումնասիրության և գնահատման ընթացքում՝ աշխատանքը կամ ֆինուսյունը հանձնելուց առաջ, ընթացքում և հետո, և կարող է ներառել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր աշխատանք, դասադրոց, դասընթաց կամ ֆինուսյուն:

**6.1. Ակադեմիական ազնվության խախտման (ներդպրոցական և արտաքին) օրինակներն են՝**

**6.1.1. ընթացիկ և դասարանական աշխատանքներ**

**6.1.1.1.** Գրագողություն, որը այլոց գաղափարները, խոսքերը կամ աշխատանքը որպես սեփական ներկայացնելն է:

**6.1.1.2.** Գրագողություն համադասարանցիների կողմից, որն այլ սովորողի աշխատանքն արտագրելն է կամ սեփական աշխատանքն ուրիշին տրամադրելը:

**6.1.1.3.** Գաղտնի համաձայնություն, որը համագործակցային աշխատանքը որպես անհատական կամ դիտավորյալ կերպով գրեթե նույնական աշխատանք ներկայացնելն է:

**6.1.1.4.** Աշխատանքի կրկնօրինակում, որը նույն աշխատանքն ամբողջությամբ կամ մասամբ տարբեր առարկաների կամ առաջադրանքների համար ներկայացնելն է:

**6.1.1.5.** Տվյալների կեղծում, որը որևէ առարկայի կամ նախագծի տվյալները հորինելը, փոփոխելը կամ խեղաթյուրելն է:

**6.1.1.6.** Ոչ ինֆորմալ կամ պատվիրված աշխատանք, որը երրորդ կողմի (ներառելով էսսե գրելու ծառայություններ կամ չթույլատրված ԱԲ գործիքներ) ավարտած, խմբագրած կամ ստեղծած աշխատանք ներկայացնելն է:

**6.1.1.7.** Ոչ էթիկական աշխատանք, որը ներառում է վիրավորական, խտրական կամ անպարկեշտ բովանդակություն:

**6.1.2. Քննություններ և գնահատումներ (ներդպրոցական և ՄԲ)**

- 6.1.2.1. Բննաենյակում չբույլատրված նյութերի առկայություն (անկախ այն փաստից՝ դրանք գործածվել են, թե ոչ),
- 6.1.2.2. ոչ պատշաճ կամ ուրիշներին խանգարող՝ ներառյալ հսկիչի հրահանգներին չհետևելու վարք,
- 6.1.2.3. Բննության կամ գնահատման ընթացքում տեղեկատվության փոխանակում կամ փոխանակման փորձ,
- 6.1.2.4. Բննական կամ գնահատման նյութերի (թղթեր, բուկլետներ, քվային պանակներ) արտահոսք կամ դրա փորձ,
- 6.1.2.5. այլ անձի ինֆորմացիայի կեղծում կամ դրա բույլատրություն,
- 6.1.2.6. սկադեմիական ազնվության խախտման միջադեպի մասին չտեղեկացնելը,
- 6.1.2.7. սկադեմիական ազնվության խախտում կատարող այլ սովորողին աջակցելը,
- 6.1.2.8. ՄԲ ֆննությունների և ներդրողական գնահատումների ֆննական աշխատանքներին հասանելիություն ունենալը մինչև նախաճշված ժամանակը,
- 6.1.2.9. ՄԲ ֆննության բովանդակության բացահայտումը կամ ֆննարկումը ֆննությունից հետո 24 ժամվա ընթացքում:

### 6.1.3. Թվային և սոցիալական մեդիայի չարաչափումներ

- 6.1.3.1. Բննական նյութերի բովանդակության ֆննարկելը, կիսելը կամ շրջանառելը քվային հարթակներում մինչև 24-ժամյա սահմանափակման ժամկետի ավարտը,
- 6.1.3.2. Համացանցում անպատշաճ կամ վիրավորական արտահայտությունների օգտագործումը, որոնք կարող են վնասել դպրոցի կամ ՄԲ-ի հեղինակությունը:
- 6.1.3.3. Տեխնոլոգիաների կամ արհեստական բանականության գործիքների կիրառության չարաչափումը՝ ներառյալ դրանց չձանուցված և չբույլատրված գործածությունը առաջադրանքներ կամ գնահատման աշխատանք կատարելիս:

### 6.1.4. Ակադեմիական ազնվության խախտման դեպքի ուսումնասիրությանը միջամտելը

- 6.1.4.1. Ուսումնասիրության ժամանակ չհամագործակցելը,
- 6.1.4.2. կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկատվության տրամադրելը,
- 6.1.4.3. վկաների վրա ազդելու կամ նրանց վախեցնելու փորձեր կատարելը
- 6.1.4.4. ուսումնասիրությունն իրականացնող անձանց նկատմամբ սպառնալից վարքագիծ ցուցաբերելը:

### 6.1.5. Կեղծիք կամ գեղծարարություն

- 6.1.5.1. Գնահատականների, հավաստագրերի կամ միջուկներ(էլեկտրոնային կամ թղթային) փոփոխություն, կեղծում կամ խեղաթյուրում:

## 6.2. Ընթացակարգերի իրականացում

- 6.2.1. Ակադեմիական ազնվության ներդրողական խախտումներ (դպրոցական առաջադրանքներ, յուրացման առաջադրանքներ, ներդրողական ֆննություններ, դասարանական նախագծեր)
  - Դեպքերը դիտարկվում են ըստ դպրոցի արձագանքման ներքին բազմամակարդակ համակարգի (1-4-րդ մակարդակներ)՝ կրթական միջոցների և համաչափ սույժերի կիրառմամբ: Հաշվետվությունները հավաքագրվում են սովորողի անձնական գործում:
- 6.2.2. Ակադեմիական ազնվության արտաքին խախտումներ (ՄԲ դասընթացներ, գնահատում կամ ֆննություններ)
  - Ներդրողական ընթացակարգերից բացի, բոլոր դեպքերը պետք է զեկուցվեն ՄԲ-ին՝ համաձայն ՄԲ-ի պատճենական կանոնակարգերի: ՄԲ-ն սահմանում է պատիժներ, որոնք կարող են ներառել միավորների իջեցում, արդյունքների անվավեր հանաչում կամ դիպլոմից զրկում:

Ակադեմիական ազնվության խախտման ուսումնասիրությանը միջամտելու դեպքում ենթադրվող պատիժների

մասին ավելի իմանալու համար  
Տե՛ս հետևյալ հղումը՝ [Academic Integrity IBO 2019 \(updated February 2025\)](#)։

## 7. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

Գրավոր և բանավոր առաջադրանքների/դասընթացների և ֆննդությունների/գնահատումների ժամանակ տեղի ունեցող ակադեմիական ազնվության խախտման դեպքերը դասակարգվում են ըստ չորս մակարդակի: Կախված ակադեմիական ազնվության խախտումների մակարդակից՝ անձը կարող է պատժվել համապատասխանաբար:

Դպրոցի ընթացակարգ

### 7.1. Մակարդակ 1

(օրինակ՝ թերի մեջբերում՝ անբավարար պատրաստվածություն, պատահական կերպով վերարտադրության սխալների պատճառով)

#### 7.1.1. Ներքին/ներդպրոցական արձագանքման միջոցներ՝

- ուսումնական միջամտություններ (ուսուցչի կողմից ուղղորդումներ, ուղղումներով աշխատանքի վերահանձնում, աշխատանքի անդադարձ),
- դեպքի մուտքագրում սովորողի անձնական գործի մեջ և զեկուցում ծրագրի համակարգողին,
- ծնողներին/խնամակալներին իրազեկում դեպքի մասին:

#### 7.1.2. Դիմում տնօրենության խորհրդին: Այն պարագայում, երբ դեպքը չի դիտարկվում որպես պատժարկական խախտում սովորողին տրվում է «առաջին նախազուգուցում»

### 7.2. Մակարդակ 2

(օրինակ՝ ավելի մեծ հատվածներով գրագողություն, չթույլատրված համագործակցություն, արհեստական բանականության կիրառության չարաչափում, մեկ ուրիշից աշխատանքի կրկնօրինակում)

#### 7.2.1. Ներքին/ներդպրոցական արձագանքման միջոցներ

- Սովորողի աշխատանքը գնահատվում է «գրո»: ՄԴԾ-ում (MYP) այս դեպքում «գրո» գնահատական է դրվում բոլոր չափանիշների համար:
- Սովորողը գրում է վարքի ինֆորմալություն և հանդիպում ծրագրի համակարգողի հետ:
- Ծնողներին/խնամակալները պատռոնապես իրազեկվում են մանկավարժների և դասվարների կողմից:
- Դեպքը մանրամասները մեկտեղվում են սովորողի հաշվետու ֆարսում:

#### 7.2.2. Դպրոցական ընթացակարգ (առաջին պատժարկական խախտում):

- Նույնը, ինչ վերևում: Վերահանձնման հնարավորություն չկա:
- Ծրագրի համակարգողը և դպրոցի տնօրենը պատռոնապես պահում են փաստաթղթերը:

### 7.3. Մակարդակ 3

(օրինակ՝ ֆննդության ժամանակ ակադեմիական ազնվության խախտում, այլ անձի ինֆորմացիայի կեղծում, կրկնվող գրագողություն, միտումնավոր կերպով արհեստական բանականությունից արտագրություն, պատվիրված աշխատանք, սվյալների կեղծում)

### 7.3.1. Ներքին/ներդրոցական արձագանքման միջոցներ

- Սովորողի աշխատանքը գնահատվում է «գրո»՝ առանց վերահանձնման հնարավորության:
- Դեպքը ներկայացվում է դպրոցի տնօրենին և կարգապահական խորհրդին:
- Հանդիպում է տեղի ունենում սովորողի, ծնողների/խնամակալների, առարկայական ուսուցչի, ծրագրի համակարգողի, մանկավարժի և հոգեբանի հետ:

### 7.3.2. Դպրոցական ընթացակարգ (երկրորդ պատժական խախտում):

- Նույնը, ինչ վերևում՝ ավելի խիստ կարգապահական տույժերի կիրառմամբ:

### 7.3.3. Արտաքին արձագանքման միջոցներ (ՄԲ):

- Եթե խախտումը վերաբերում է արտաքին գնահատմանը կամ ֆինուրյանը, ապա այդ մասին հաղորդվում է ՄԲ-ին:
- ՄԲ-ի կողմից կատարված ուսումնասիրությունը և պատիժները իրականացնում են ՄԲ-ի պատիժների ձևաչափին համապատասխան:

## 7.4. Մակարդակ 4

(օրինակ՝ պարբերաբար պատվիրված աշխատանքների ներկայացում, տարբեր առարկաներում բազմաթիվ խախտումներ, ֆինանսական աշխատանքների արտահոսք, ֆինուրյան ժամանակ շարունակական խախտումներ)

### 7.4.1. Ներքին/ներդրոցական արձագանքման միջոցներ

- Դեպքն անմիջապես ներկայացվում է դպրոցի տնօրենին և կարգապահական խորհրդին:
- Սովորողն անորոշ ժամանակով հեռացվում է դասերից մինչև վերջնական որոշման ընդունումը:

### 7.4.2. Կարգապահական խորհուրդը կարող է Շիրակացու հեմարանից հեռացնելու առաջարկ ներկայացնել: Դպրոցական ընթացակարգ (երրորդ պատժական խախտում):

- Նույնը, ինչ վերևում. կարգապահական խորհուրդն ուսումնասիրում է դեպքը մինչև հեռացման որոշում կայացնելը:

### 7.4.3. Արտաքին արձագանք (ՄԲ):

- Միջադեպը պատժողական հաղորդվում է ՄԲ:
- ՄԲ-ն կարող է կիրառել պատժամիջոցներ, այդ թվում՝ չեղարկել արդյունքները, գրկել դիպլոմից կամ որակագրից աշխատանքը:

## 8. ՆԵՐՔԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Շիրակացու հեմարանը ունի ակադեմիական ազնվության խախտման կամ ոչ պատշաճ կառավարման դեպքերի հաղորդման և հավաքագրման հստակ ու բախանցիկ համակարգ: Այս ընթացակարգերը ապահովում են արդարություն, պատասխանատվություն և հետևողականություն բոլոր ծրագրերում և դասարաններում:

### 8.1. Քայլ 1. Խնդրի բացահայտում

8.1.1. Առարկայական ուսուցիչը կամ հսկիչը, որը նկատում է ակադեմիական ազնվության հնարավոր խախտում, գրավոր կերպով ներկայացնում է կասկածները՝ տրամադրելով ապացույց (օրինակ՝ արտագրված տեքստ, Turnitin-ի գեկույց, ֆինուրյան ընթացում խախտումների մասին գրառումներ):

8.1.2. Ուսուցիչը ֆինանսական է դեպքը սովորողի՝ իրավիճակը պարզելու համար:

## 8.2. Քայլ 2. նախնական հաշվետվություն

- 8.2.1. Ուսուցիչը միջադեպի մասին գրավոր հաշվետվություն է ներկայացնում ծրագրի համակարգողին (ԿԴ, ՄԴ կամ ԴԾ/ՀԾ):
- 8.2.2. Սովորողը պետք է գրավոր և բանավոր ներկայացնի իրավիճակը դեպքի ուսումնառության ժամանակ:
- 8.2.3. ԿԴ-ում փոքր դեպքերը ֆննարկվում են դասարանում դասավանդման ընթացքում, սակայն, միևնույն է, պետք է հակիրճ կերպով գրանցվեն:

## 8.3. Քայլ 3. վերանայում համակարգողի կողմից

- 8.3.1. Ծրագրի համակարգողը դիտարկում է գեկույցները, որոշում է ակադեմիական ազնվության խախտման մակարդակը (փոքր, միջին, լուրջ կամ ծանր) և սահմանում հաջորդ քայլերը:
- 8.3.2. Անհրաժեշտության դեպքում համակարգողը խորհրդակցում է ուսուցչի, դպրոցի տնօրենի և կարգապահական խորհրդի հետ:

## 8.4. Քայլ 4. Իրազեկում ծնողներին և սովորողներին

- 8.4.1. Ծնողները / խնամակալները անհապաղ տեղեկացվում են դեպքի մասին ուսուցչի, մանկավարժի կամ համակարգողի կողմից՝ կախված իրավիճակի ծանրությունից:

## 8.5. Քայլ 5. որոշում և փաստաթղթավորում

- 8.5.1. Հետևանքների մասին որոշումը կայացվում է՝ սույն ֆաղափականության մեջ շարադրված արձագանքման բազմաստիճան համակարգի համաձայն:
- 8.5.2. Հետևանքը գրանցվում է և կցվում սովորողի գործերին:
- 8.5.3. Լուրջ կամ կրկնվող դեպքերում սովորողը, ծնողները, համակարգողը և տնօրենը հանդիպում են՝ որոշումը ֆննարկելու և հետագա քայլեր ձեռնարկելու համար:

## 8.6. Քայլ 6. Հաղորդում/դիմում ՄԲ-ին (եթե կիրառելի է)

ՄԲ գնահատումների կամ ֆննությունների հետ կապված դեպքերում ծրագրի համակարգողը ապահովում է, որ միջադեպը հաղորդվի IB-ին՝ համաձայն պաշտոնական ընթացակարգերի:

**9. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴԵՐԵՐԸ ԵՎ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՄ**

---

## 9.1. Դպրոցը (Ղեկավարներ և վարչակազմ)

Դպրոցն ստեղծում է ակադեմիական ազնվության պահպանման միջավայր և ապահովում է դրա խախտումները կանխող համակարգերի առկայությունը:

Դպրոցը պարտավորվում է՝

- 9.1.1. երկու տարին մեկ վերանայել և թարմացնել ակադեմիական ազնվության ֆաղափականությունը՝ խորհրդակցելով աշխատակիցների, ուսանողների և ծնողների հետ՝ ըստ ՄԲ-ի թարմացումների,
- 9.1.2. ապահովել ֆաղափականության հասանալիությունը համայնքին (կայք, սովորողների/ծնողների ուղեցույցներ, բաց դռներ),
- 9.1.3. ուսուցիչների, աշխատակիցների և ծնողների համար կանոնավոր դասընթացներ և սեմինարներ անցկացնել ակադեմիական ազնվության և ՄԲ կանոնների վերաբերյալ,
- 9.1.4. վերահսկել բնության ընթացակարգերը, ապահովել ՄԲ նյութերի և կանոնների պահպանումը,
- 9.1.5. ապահովել գրագոյության հայտնաբերման և ԱԲ մետադիտարկման գործիքների հասանելիություն աշխատակիցների և սովորողների համար. Շիրակացու հեմարանը օգտագործում է «Turnitin» հարթակը ([www.turnitin.com](http://www.turnitin.com))՝ աշխատանքի իսկությունն ու հղումների հեղուկությունը ստուգելու համար:
- 9.1.6. սահմանել հստակ ընթացակարգեր և հետևել դրանց՝ ակադեմիական ազնվության խախտման և ոչ պատշաճ կառավարման դեպքերը դպրոցում և ՄԲ-ում ուսումնասիրելու համար:

## 9.2. Ծրագրի համակարգողներ

Ծրագրերի համակարգողները պատասխանատու են ՄԲ ծրագրերում ազնվության խթանման և պահպանման համար:

Նրանք պարտավորվում են՝

- 9.2.1. ցուցաբերել էթիկական վարք և սկզբունքայնություն որոշումների կայացման հարցում իրենց բոլոր գործողություններում,
- 9.2.2. ապահովել բոլոր աշխատակիցների վերապատրաստումը ակադեմիական ազնվության կանոնակարգով,
- 9.2.3. սովորողներին և ծնողներին իրազեկել առարկաների պահանջների, առաջարկությունների և առաջադրանքների կատարման ժամկետների մասին,
- 9.2.4. ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու անգամ կազմակերպել ուսանողների հետ հանդիպումներ և ծնողների համար սեմինարներ ազնվության վերաբերյալ,
- 9.2.5. ապահովել ՄԲ փաստաթղթերի պահպանման, գնահատման ընթացակարգերի և բնության ընթացի վերաբերյալ կանոններին համապատասխանությունը,
- 9.2.6. սովորողի կողմից ակադեմիական ազնվության խախտման և դպրոցի կողմից ոչ պատշաճ կառավարման դեպքերը ներկայացնել դպրոցի առաջնորդությանը և, անհրաժեշտության դեպքում, ՄԲ-ին,
- 9.2.7. ուղղորդել ուսուցիչներին՝ ակադեմիական ազնվությունը ծրագրում և ՈւՄ հմտությունների

ձևավորման մեջ ընդգրկելու հարցում:

### 9.3. Ուսուցիչներ

Ուսուցիչները դասարաններում ուղղորդման և կիրառման առաջնագծում են: Նրանք պարտավորվում են՝

- 9.3.1. ներառել ակադեմիական ազնվությունը դասավանդման և ուսուցման գործընթացում, մասնավորապես՝ ՈւՄ հմտությունների (հետազոտական, հաղորդակցական և ինֆնակառավարման) զարգացման միջոցով,
- 9.3.2. սովորեցնել սովորողներին, թե ինչպես մեջբերել և հղում կատարել՝ օգտագործելով **MLA 9** ձևաչափը՝ փորձի, օրինակների միջոցով,
- 9.3.3. Անհրաժեշտության դեպքում օգտագործել գրագողությունը և ԱԲ կիրառությունը բացահայտող գործիքներ ([www.turnitin.com](http://www.turnitin.com)),
- 9.3.4. սովորողներին տալ հետադարձ կապ՝ առանց չափազանց շատ խմբագրելու կամ օգնելու,
- 9.3.5. վերահսկել սովորողների վարքը ֆնուդությունների և գնահատման ընթացքում,
- 9.3.6. ակադեմիական ազնվության խախտման պարագայում անհապաղ արձագանքել՝ արձանագրելով դեպքը և տեղեկացնելով ծրագրի համակարգողին,
- 9.3.7. լինել էթիկական վարքի օրինակ՝ ապահովելով ուսումնական նյութերի համապատասխանությունը ակադեմիական ազնվության չափանիշներին,
- 9.3.8. ստորագրել ակադեմիական ազնվության պահպանման պարտավորություն (տե՛ս Հավելված),
- 9.3.9. մասնակցել ակադեմիական ազնվության ֆաղափականության վերանայման գործընթացին:

### 9.4. Սովորողներ

Ակնկալվում է, որ սովորողները լինեն սկզբունքային և պահպանեն ակադեմիական ազնվությունը: Նրանք պարտավորվում են՝

- 9.4.1. Ստեղծել իրական, ինֆնատիպ աշխատանքներ ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ իրականացնելիս,
- 9.4.2. ներկայացնել գաղափարների, տեխստերի, պատկերների և սվյալների բոլոր աղբյուրները ճշգրիտ և պատասխանատու կերպով,
- 9.4.3. պատճառ կերպով գործածել հղումներ կատարելու **MLA 9** ձևաչափը, որն ընդունված մոտեցում է և՛ Շիրակացու նեմարանում, և՛ ՄԲ-ում,
- 9.4.4. քավանցիկ կերպով գործածել ԱԲ և քվային գործիքները՝ անհրաժեշտության դեպքում հայտնելով նրանց գործածության մասին, և երբեք ԱԲ-ով ստեղծված աշխատանքը չներկայացնել որպես սեփական,
- 9.4.5. գերծ մնալ աշխատանքները կատարելիս կամ խմբագրելիս չքույլատրված օգնություն ստանալուց՝ ներառյալ ընկերների, ընտանիքի, այլ սովորողների, մասնավոր կրկնուսույցների, էսսեների կամ տեխստերի խմբագրման ծառայությունները, պատրաստի էսսեների շտեմարանները կամ ֆայլերի փոխանակման կայքերի օգնությունը,
- 9.4.6. պահպանել ներքին ժամկետները՝ նվազեցնելով ակադեմիական ազնվության խախտման ռիսկերը, և

պատասխանատվությամբ բաշխել աշխատանքային ծանրաբեռնվածությունը,

**9.4.7.** պահպանել ՄԲ ֆնուրյունների անցկացման կանոնները՝ ներառյալ ֆնուրյան բովանդակության վերաբերյալ տեղեկատվության փոխանակման **24** ժամի կանոնը,

**9.4.8.** հայտնել ակադեմիական ազնվության խախտման և ոչ պատշաճ կառավարման իրենց հայտնի ցանկացած դեպք,

**9.4.9.** ամեն տարի ստորագրել ակադեմիական ազնվության պահպանման պարտավորություն՝ հաստատելով, որ հասկանում են և պահպանելու են ակադեմիական ազնվությունը,

**9.4.10.** մասնակցել ակադեմիական ազնվության ֆաղափականության վերանայման գործընթացին:

## 9.5. Ծնողներ և օրինական խնամակալներ

Ծնողներն ու խնամակալները աջակցում են ակադեմիական ազնվությանը՝ տանն ամրապնդելով արժեքները: Նրանցից ակնկալվում է՝

**9.5.1.** կարգալ և հասկանալ դպրոցի՝ ակադեմիական ազնվության ֆաղափականությունը և ՄԲ նյութերը,

**9.5.2.** զերծ մնալ իրենց երեխաներին ավելորդ կամ չարտոնված օգնություն ցուցաբերելուց,

**9.5.3.** խուսափել ակադեմիական անազնվությանը մասնակցելուց կամ այն խրախուսելուց (օրինակ՝ աշխատանքի վերաժարադրում, արտաֆին խմբագիրների դիմում, էսսեների շտեմարանների կամ ԱԲ չքույլատրված գործիքների օգտագործում),

**9.5.4.** խրախուսել երեխաներին պլանավորել ակադեմիական աշխատանքը, հետևել ժամկետներին և գործել ազնվորեն,

**9.5.5.** մասնակցել ծնողների համար նախատեսված սեմինարներին և նպաստել ֆաղափականության վերանայման գործընթացին,

**9.5.6.** ստորագրել ակադեմիական ազնվության պարտավորություն՝ վերահաստատելով գործընկերների դերը ազնվության մշակույթի ձևավորման գործում:

## 10. ԿԱՊԵՐ ԱՅԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ակադեմիական ազնվության ֆաղափականությունը չի գործում անկախ, այն սերտորեն կապված է այլ ֆաղափականությունների հետ, որոնք կարգավորում են դասավանդումը, ուսումնառությունը, գնահատումը և սովորողների բարեկուցությունը Շիրակացու հեմարանում: Միասին ֆաղափականությունները համակցված հիմք են՝ դպրոցում էթիկական վարքի, արդարության և ներառականության համար:

Այս ֆաղափականությունը պետք է կարդացվի հետևյալ փաստաթղթերի հետ համատեղ՝

- Գնահատման ֆաղափականություն, որը նկարագրում է գնահատման սկզբունքները, փորձը և ընթացակարգերը բոլոր ծրագրերում և շեշտը դնում է չափորոշչային գնահատման և ուսուցման հավաստի ապացույցների վրա,
- Ներառականության և հավասարության ֆաղափականություն, որն ապահովում է հավասար հնարավորություններ բոլոր սովորողների համար՝ սովորածը ներկայացնելու համար՝ ստեղծելով համապատասխան հարմարեցումներ և կարգավորումներ, որոնք նվազեցնում են ակադեմիական ազնվության խախտման ռիսկերը,

- Լեզվի ֆաղափականություն, որը սահմանում է տարբեր լեզուներով ուսումնառության, հաղորդակցման և հղումներ կատարելու ակնկալիքները՝ խրախուսելով հստակություն և հեզբություն ակադեմիական աշխատանքներում,
- Երեխաների պատասխանության և անվտանգության ֆաղափականություն, որը հիմնավորում է դպրոցի պատասխանատվությունը՝ հարգելու սովորողների իրավունքները և արժանապատվությունը՝ ներառյալ նրանց աշխատանքի և մտավոր սեփականության նկատմամբ էթիկական վերաբերմունքը:
- Վարձականոն (աշխատակիցների և սովորողների համար), որը սահմանում է ակնկալվող վարձագիծը, ներառյալ ազնվությունը, հարգանքը և պատասխանատվությունը, որոնք ընկած են ակադեմիական ազնվության հիմքում,
- Թվային ֆաղափացիություն/ ՏՏ ընդունելի օգտագործման ֆաղափականություն, որն ապահովում է տեխնոլոգիաների, սոցիալական ցանցերի և ԱԲ գործիքների գործածությունը՝ ակադեմիական ազնվության սկզբունքների համաձայն,
- Բողոքների վարման ֆաղափականություն, որը նկարագրում է այն ընթացակարգերը, որոնց միջոցով սովորողներն ու ծնողները ներկայացնում են գնահատման, դեպքերի ուսումնասիրության և պատժամիջոցների կիրառման արդարության վերաբերյալ իրենց անհանգստությունը ակադեմիական ազնվության խախտման դեպքում:

## 11. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- ❖ [Academic Integrity IBO 2019 \(updated February 2025\)](#).
- ❖ Diploma Programme Academic honesty, IBO, updated 2011
- ❖ Academic Honesty in the International Context , IBO 2014
- ❖ Academic honesty –From principles to practice
- ❖ Assessment Procedures, IBO, 2026
- ❖ [Effective citing and referencing, IBO, 2022](#)
- ❖ [General Regulations: Diploma Programme , IBO](#)
- ❖ International Baccalaureate. (2014). Academic honesty in the Diploma Programme. International Baccalaureate Organization.
- ❖ International Baccalaureate. (2014). Academic honesty in the Middle Years Programme. International Baccalaureate Organization.
- ❖ International Baccalaureate. (2020). Programme standards and practices. International Baccalaureate Organization.
- ❖ [MLA Citation Guide \(MLA 9th Edition\)](#)

Օժանդակող աղբյուրների մասին նշում

Վերանայող հանձնաժողովն ընդունում է վերայնան գործընթացի ժամանակ ԱԲ գործիքների գործածությունը (օրինակ՝ *OpenAI*-ի *ChatGPT*), մասնավորապես՝ լեզվի հղկման և հեզբության

համար: Բովանդակային կողմը և որոշումները կազմվել են դպրոցի՝ ֆաղափականության վերանայման թիմի կողմից:

## 12. ՀԱՎԵԼՎԱԾ: ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

### 12.1. Ուսանողի ակադեմիական ազնվության պահպանման պարտավորություն

Ուսանողների համար

Ես՝ \_\_\_\_\_, ս, հաստատում եմ, որ կարդացել և հասկացել եմ Շիրակացու հեմարանի ակադեմիական ազնվության ֆաղափականությունը: Ես ընդունում եմ, որ

- իմ աշխատանքը պետք է լինի վավեր, ինֆորմատիվ և ազնիվ կերպով ստեղծված,
- ես ճիշտ կիրառեմ MLA 9 մեջբերման ձևաչափը, երբ օգտագործեմ այլ հեղինակների աղբյուրներ, գաղափարներ կամ տվյալներ,
- ես պատասխանատույամբ կօգտագործեմ ԱԲ-ն և թվային գործիքները՝ հայտնելով և ընդունելով դրանց օգտագործումը և երբեք չհերկայացնելով ԱԲ-ով ստեղծված աշխատանքները որպես սեփական,
- ես չեմ ստանա և չեմ տրամադրի չթույլատրված օգնություն՝ ներառյալ օգնություն ընկերներից, հարազատներից, կրկնուսույցներից, էսսեների շտեմարաններից կամ ճիշտի վոխանակման կայքերից,
- ես կհետևեմ ՄԲ ֆննդությունների կանոններին՝ ներառյալ ֆննդության բովանդակության չբացահայտման 24 ժամի կանոնը,
- ես հասկանում եմ, որ ակադեմիական ազնվության խախտումը կարող է հանգեցնել կարգապահական միջոցների Շիրակացու հեմարանի և համապատասխան դեպքերում նաև ՄԲ-ի կողմից:

Ստորագրություն (սովորող) \_\_\_\_\_ Անսաթիվ \_\_\_\_\_

Ավարտելու տարին \_\_\_\_\_

### 12.2. Ծնողի/Օրինական խնամակալի ակադեմիական ազնվության պահպանման պարտավորություն

Ես՝ \_\_\_\_\_, ս, որպես վերը նշված ուսանողի ծնող/օրինական խնամակալ՝ հաստատում եմ, որ կարդացել և հասկացել եմ Շիրակացու հեմարանի ակադեմիական ազնվության ֆաղափականությունը: Ես պարտավորվում եմ՝

- աջակցել իմ երեխային ակադեմիական ազնվության և արդարության պահպանման գործում,
- զերծ մնալ աշխատանքների կատարման կամ խմբագրման ընթացքում չթույլատրված օգնություն ցուցաբերելուց,
- համագործակցել դպրոցի հետ այն դեպքերում, երբ հնարավոր է իմ երեխայի կողմից միտումնավոր կամ ոչ միտումնավոր կերպով ակադեմիական ազնվության խախտում է նկատվել,

- խրախուսել ժամանակի, տեխնոլոգիայի և ռեսուրսների պատասխանատու օգտագործումը:

Ստորագրություն (ծնող/խնամակալ) \_\_\_\_\_ Ամսաթիվ \_\_\_\_\_

**12.3.** Ուսուցչի ակադեմիական ազնվության պահպանման պարտավորություն

Ես՝ \_\_\_\_\_ ս, որպես Շիրակացու հեմարանի ուսուցիչ՝ ընդունում եմ իմ պատասխանատվությունը՝ օրինակ ծառայելու և պահպանելու ակադեմիական ազնվության սկզբունքները: Ես պարտավորվում եմ՝

- հիմնվել ակադեմիական ազնվության սկզբունքների վրա ուսումնական գործունեության և գնահատման ժամանակ,
- սովորողներին տալ հստակ հրահանգներ **MLA 9**-ի մեջբերման և հղումներ կատարելու ժամանակ՝ ներառելով այդ մոտեցումը իմ նյութերում,
- օգտագործել գրագոյություն և **ԱԲ** հայտնաբերման գործիքներ (օրինակ՝ Turnitin)՝ սովորողների աշխատանքի ինֆորմայնությունը ստուգելու համար,
- ուղղորդել և ապահովել ուսուցմանն աջակցող հետադարձ կապ՝ առանց ավելորդ կամ չքույլտարված օգնության,
- հարգել ՄԲ-ի կանոնակարգերը գնահատման անցկացման, նյութերի անվտանգ պահպանման և ֆննդության ընթացակարգերի վերաբերյալ,
- ծրագրի համակարգողին ժամանակին և քափանցիկ կերպով տեղեկացնել ակադեմիական ազնվության խախտման կամ ոչ պատշաճ կառավարման կասկածելի դեպքերի մասին,
- դրսևորել ազնվություն, արդարություն և պրոֆեսիոնալիզմ բոլոր հարաբերություններում՝ օրինակ ծառայելով սովորողների և գործընկերների համար:

Ստորագրություն (ուսուցիչ) \_\_\_\_\_ Ամսաթիվ \_\_\_\_\_

**13. ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ**

Ակադեմիական ազնվության այս ֆաղափականությունը հարափոփոխ փաստաթուղթ է, որը վերանայվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ՝ ՄԲ կանոնակարգերին, զարգացող կրթական փորձին և Շիրակացու հեմարանի համայնքի կարիքներին ընդառաջ: Վերանայման գործընթացը ներառում է խորհրդակցություններ դպրոցի առաջնորդության, ծրագրի համակարգողների, ուսուցիչների, աշակերտների և ծնողների հետ:

Տարբերակ	Հաստատման ամսաթիվ	Վերանայվել է	Հիմնական փոփոխություններ / գրառումներ
տ.1.0	Սեպտեմբեր 2018	Դպրոցի առաջնորդություն	Ստեղծվել է Ակադեմիական ազնվության ֆաղափականության նախնական նախագիծը:

տ2.0	Սեպտեմբեր 2020	Ծրագրի համակարգողներ, ուսուցիչներ	Թարմացվել է ՄԲ-ի նոր ուղեցույցներով (2019 թվականի ակադեմիական ազնվություն):
տ3.0	Սեպտեմբեր 2022	Դպրոցի ղեկավարություն, համակարգողներ, Ծնողական խորհուրդ, Ուսանողական խորհուրդ,	Լիովին վերանայվել է՝ ՄԲ ակադեմիական ազնվության բաղաձայնությունը (2025) և PSP 2020 (Programme Standards and Practices) համապատասխանեցնելու համար:
տ4.0	Սեպտեմբեր 2024	Պլանավորվող	ԱԲ օգտագործման ուղեցույցներ, MLA 9 մեջբերման մոտեցումներ և բազմաստիճան արձագանքման համակարգ: